ԱԶԳ

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս Սահմանադրության նախագծի մշակումն [illegible]

[illegible]

# Արդարադատության սահմանադրական հիմունքները

[illegible]

ՀԱՅԱՍՏԱՆ

## Կռվի հաղթանակի 50-ամյակը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1995 թվականի հունվարի 30-ին ընդունել է թիվ 45 որոշումը, որով համապատասխան նախարարություններին եւ գերատեսչություններին հանձնարարվել է կազմակերպել միջոցառումներ ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 50-ամյակը նշելու համար: Միջոցառումների կազմակերպման եւ կոորդինացման նպատակով ստեղծվել է կառավարական հանձնաժողով՝ փոխվարչապետ Վիգեն Չիտեչյանի գլխավորությամբ:

Հանձնաժողովին հանձնարարվել է ապահովել ԱՊՀ երկրների պետությունների ղեկավարների 1993 թվականին սեպտեմբերի 24-ին «1941-45 թթ. Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 50-ամյակի տոնակատարության նախապատրաստման մասին» որոշմամբ նախատեսված՝ ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 50-ամյակի տոնակատարության միջոցառումների իրականացումը:

Մոսկովյան հանդիսություններին մասնակցելուց բացի Հայաստանում նույնպես նախատեսվում են հաղթանակի 50-ամյակին նվիրված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, բարձրագույն կրթության եւ գիտության, լուսավորության նախարարություններին, գիտությունների ազգային ակադեմիային, հեռուստառադիոպետվարչությանը հանձնարարվել է մշակել եւ իրականացնել հաղթանակի ապահովման գործում հայ ժողովրդի ներդրումը լուսաբանող ծրագրեր:

Հոբելյանի օրերին պատերազմի վետերաններին կհանձնվեն հատուկ այդ իրադարձության առթիվ թողարկված հուշամեդալներ: Հայաստանի պատվիրակները կմասնակցեն նաեւ հաղթանակի 50-ամյակին նվիրված մարզական միջոցառումներին, որոնք կազմակերպվելու են ԱՊՀ երկրների շրջանակներում: Պատգամավորների խաղաղ ժամանակաշրջանային խորհուրդների գործկոմներին հանձնարարված է 1995 թվականի մայիսի 9-ի նախօրեին անցկացնել հաղթանակի 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստեր, իսկ մայիսի 9-ին կազմակերպել պատերազմում զոհվածների հուշարձաններին պսակադրության արարողություն:

Հոբելյանի կապակցությամբ կբարեկարգվի «Հաղթանակի» զբոսայգու «Անհայտ զինվորի» հուշարձանը:

ՀԱԱ

## «Բժիշկներ առանց սահմանի» ճանաչում է հայերի ցեղասպանությունը

ԵՐԵՎԱՆ, 1 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆԱՐՔ: Ելույթ ունենալով Վաշինգտոնի ազգային մամուլի ակումբում, հունվարի 24-ին «Բժիշկներ առանց սահմանի» միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Ալեն Դեսթեխը հայտարարել է, որ 20-րդ դարում տեղի է ունեցել ցեղասպանություն որակվելու արժանի երեք իրադարձություն: Դեսթեխը 20-րդ դարի առաջին ցեղասպանություն է համարել Օսմանյան Թուրքիայում հայերի եղեռնը, երկրորդ ցեղասպանությունը հրեաների ոչնչացումն էր նացիստների կողմից 2-րդ համաշխարհային պատերազմի ընթացքում, իսկ երրորդը՝ անցած տարի Ռուանդայում տեղի ունեցած զանգվածային սպանությունները: Պատասխանելով այն հարցին, թե անհրաժեշտ չէ՞ արդյոք միջազգային տրիբունալ հանձնել նմանօրինակ հանցագործությունները, Դեսթեխը պատասխանել է. «Արդարադատությունը ոչ միայն բարոյական գործընթաց է, այլեւ քաղաքական անհրաժեշտություն: Դահիճներին պատասխանատվության չկանչելը քաղաքական ահավոր սխալ է»: Դոկտոր Դեսթեխը դարասկզբի հայերի ցեղասպանությունը համեմատել է այս օրերին Թուրքիայում քրդերի ոչնչացման հետ: Նա ավելացրել է, որ Թուրքիայի կառավարությունը իր ղեկավարած կազմակերպության ներկայացուցիչներին չի թույլատրում այցելել իրադարձությունների վայրերը: Պարոն Դեսթեխը նաեւ քննադատել է մարդասիրական օգնության բաշխման հարցերում Միջազգային կարմիր խաչի չեզոք դիրքորոշման պատճառը: «Երբ ամբողջ աշխարհը չեզոքություն է պահպանում ցեղասպանության փաստերի նկատմամբ, մենք կարծում ենք, որ, այնուամենայնիվ, որեւէ մեկը պետք է վեր կենա եւ ցեղասպանությանն ասի՝ ոչ»:

digitised by A.R.A.R.@

